

Երինչն այն . ցանկամահա զնորայն կորուստ , տեսանես :

**Կորիդոն**

Այս . 'ի ճիրանունս ըզդա ունիմ , ահա նա .

**Բատոռոն**

Զի գոյզն է վիրիդ հարուած , այլ զորպիսի ընկճէ այր :

**Կորիդոն**

Ի լեառն եթէ ելցես , բատոռէ , բոկոտն դայցես մի ,  
Զի լերինս փուշ և դըմնիկք մացառամոլ բուսեալ կան :

**Բատոռոն**

Աղէ ասա , կորիդոն , իցէ դեռ ողջ ծերունին  
Որ մըրբայօն տարփածուին 'ի սէր հարեալ մոլցաւ :

**Կորիդոն**

Դեռ այն ինչ , չարաճընիդ , հաղիւ եկեալ նա այսրէն՝  
Տեսի զնա առ փարախաւն՝ զի զարուեստիւն իւրով դայր .

**Բատոռոն**

Քաջէ , այր չարախտավատ . զի աղզըդ քո և սերունդ՝  
Մըրցեսցի 'նդ այծամարդաց և ընդ Պանեայց փայտոտանց :

**Թարգմ. Հ. Ա. Սուբրեն**

## ԵՍ Ա ՎՐ Ի Լ Ո Ս

Եսքիլս ողբերգական քերթողութեանն առաջին հնարագիւտ յելլենացւոց ,  
Էրյազդէ Աթենացի , յիշեւսինեայ տոհմէ , ժամանակակից Պինդարու՝ պարագլիք  
Քնարերգական բանատեղծութեանց : Քաջինսկ և արի ասի լինել 'ի մարտս , զի  
գտաւ և 'ի մարաթոնական գուպարածին ընդ եղրօր իւրում , և 'ի Սալամինոյ նա-  
ւամարտութեան և 'ի պղատէքական հետեակամարտութեան : Իսկ 'ի քերթողու-  
թեան ախորժէ մանաւանդ զպանունարան ոճս , զնմանաձայնութիւնս և զդիզա-  
գէզ մակաղիլս անուանց և բառից , զայլաբանութիւնս , և համայն ասել , զուռու-  
ցիկ և զսեթեւեթեալ բանս : Այլ և այսու ամենայնիւ , բազում ինչ գեղեցկու-  
թիւնք նշմարին 'ի նորին քերթուածս , և առաւել ծանրութիւն : Ի բազում ող-  
բերգութեանց սորա մի է և առաջիկայս , որ կոչի Գոռոմեթես կարանարոր կամ

կապանաւոր . և այս առասպել նորա , Գռոմիթեւս , ըստ առասպելին , որդի Յա .  
բեթայ , գողացեալ հուրյերկինց՝ շնչաւորեաց մարդ . այլ զշարեալ Արամազդայ  
ընդ իրմն՝ ետ զնա բեւեռել՚ի կովկաս՝ ի ձեռն զիցն Հեփեստեայ , ուր անդղ թըու-  
չուն՝ միշտ ծնանելով ՚ի նորոյ՝ ուտէր զսիրտ նորա : Հանդէս տեսարանիս , որպէս  
յայտնի է , գործի ՚ի Սկիւթիսա՝ ՚ի կովկաս : Խակ Զօրուրիւն կամ կորով և Բրո-  
նուրիւն զոր կոչէ աստանօր , կամ իցեն դիք անձնաւորեալք , կամ ըստ այլոց՝  
աստուածք ոմանք հնոյ առասպելին , որդիք Ստիւքեայ և Պալլասայ և սպասեակք  
Արամազդայ , զորս առաքէ հայրն աստուածոց Զրուան , և ընդ նոսին զհրոյն գտակ  
զՀեփեստու՝ կապել սարեզք զՊռոմիթեւս՝ ՚ի կովկասական լերին : Այլ ՚ի միփ-  
թարութիւն Գռոմիթեայ գան զստելքն Ովկէանու և ինքնին Ովկէանոս , սփոփե-  
լով զնա՝ զի ինքն երթիցէ առ Արամազդ ողսգել զնորա կամն , զի լուծցէ զՊռոմի-  
թեւս ՚ի կապանաց . այլ Պռոմիթեւս ոչ տայ նմա թոյլ երթալ աղաջաւոր առ Ա-  
րամազդ , գիտելով քաջ զանողը պնդութիւն հօրն աստուածոց : Դնայ այնպէս  
Ովկէանոս ՚ի բաց . ապա Յով որդի ինաքայ թափառական՝ մատուցեալ առ Պռո-  
միթեւս իրազեկ լինի առ ՚ի նմանէ անցիցն անցելոց , և գուշակէ նմա՝ զի մի ոք  
յորդւոց անտի իւրոց ազատեացէ զնա՝ ՚ի կապանաց և ՚ի շղթայիցն , և ազատ-  
արարն այս իցէ ինքն Հերակլէս՝ Դիոսի որդի . և զի ինքն ծնանիցի յԱրամազդայ  
զԵպափոս : Այլ զայրացեալ Պռոմիթեայ ընդգէմ Զեսայ , և Հայհոյեալ՝ զի յորդւոց  
անտի՝ զոր ծնանիցի՝ ՚ի նորա ձեռն անկցիյարքայութենէն , և բիւր այլ նզով ար-  
ձակեալ զՀետ՝ հասանէ յայնժամ Հերմէս առաքեալ յԱրամազդայ , և սպառնայ  
նմա՝ շանթահար լինել եթէ ոչ յայտնիցէ Արամազդայ զՀանդերձեալն լինել . և ՚ի  
չկամելն նորա յայտնել՝ որութնոստ փայլատակմամբ ՚ի միջայ ՚ի բաց կորուսա-  
նէ զնա :

### ԵՍՔԻԼԵՍՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

### ՊԹՈՄՄԻԹԵԽՍ ԿԱՎԱՆԱԽԱՐ

#### Ա. Ն Զ Ի Ն Ք

Կորով և բանուրիւն .

Ովկէանոս .

Հեփեստու .

Յով՝ դուստր ինաքայ .

Պռոմիթեւս .

Հերմէս .

Պար ճողային Յաւերժնարսանց .

Կորով և բանուրիւն

Ահա ՚ի վայր հեռասահման բընակութեան եկեալ կամք ,  
ընդ շաւիկս ըսկիւթական , յանհուն անկոխ ամայիս .  
Հեփեստէ , քեզ իցէ անկ զպատուիրանաց ունել խնամ :

Պըսն 4.

47

Զոր քեզ Հայր աւանդեաց . և զսա ինքնին կաշկանդել  
Չժողովը լավի զօջն՝ ՚ի զահաւանդըս ժայռից ,  
Յոտնակապս անխըզելիս ադամանդեայ շըղթայից :  
Քանզի ինքն ըզբոյդ ծաղիկ , զամենարուեստ հրոյն ճաճանչ  
Շորթեալ գաղտադողի՝ բաշխեաց պարզես մահացուաց :  
Ըզմեղաց զայսր ըզվրէժ հատուացէ զա դից անշուշտ ,  
Զի ուսցի զԱրամազդայ ըզպերճութիւն մեծարել ,  
Եւ ըզխընամն և ըզզութ ցածուցանել մարդասէրս :

### Հեփեստոս

Զօրութիւն և կորով , ձեզ իսկ է դէպ՝ ըզպատգամն  
Զըրուանեան հանել՝ ՚ի զըսւխ , իցէ խափան և ոչ մի .  
Այլ ըզդիս զիմազգակիցս չիշխեմ ինձէն կաշկանդել ,  
Բըռնաբար ՚ի ցըրտաշունչ յայս արկանել արգելան :  
Սակայն հարկ ուրեմն է ինձ յայս յաւակնել ժպրհութիւն .  
« Զի ծանր է ըզհօր պատգամն առ ոտն հարեալ անկուշել » :  
Թեմիսեայ ողջախոհին խորախորհուրդ ճետ որդեակ ,  
Յանկամն ինձ անլոյծ սարեաք պըզընձակուռ վարսեցից  
Հարըստեալ ըզքեզ . յոչ կամն յանմարդակոխ յայս բըլուր :  
Զի ոչ ձայն , և ոչ զուրուք ըզկերպարանս մահացուաց  
Յակն արկցես . ՚ի հրատ արփիոյն արեգնակէզ տոշորեալ  
Շըրջեսցես զերանգ գունոյդ . յոգնապաճոյն և գիշեր  
Արգելցէ ըզլոյսն ՚ի քէն ՚ի տարփիատենչ երեսացդ :  
Միւսանդամ զառաւոտին ըզմուայլ՝ արփին ցընդեացէ .  
Զարեաց հոյլք բազմամըթեր մաշեսցեն միշտ զոզի բու ,  
Եւ սփոփիչ ոք բընաւ բուսանիցի ուստեք ոչ :  
Նա՝ փոխան համբոյր բարուցդ հանդիտակշիռ վայելես :  
Աներկիւզ աստուածդ ՚ի դից յանադորոյն ցասմանէ՝  
Բաշխեցեր պարզես մարզկան մեռելուտեաց քան ըզչափ ,  
Էնդ որոց՝ ՚ի տարբումազին յանլոյս վիմուտս կալցես պահ՝  
Յոտընկելեաց , առանց քընոյ , և ոչ կըքեալ ծունկս ՚ի վայր .  
Աշխար , գոյժ և հեծեծումն անշայեկան բազմակոծ  
Հեծեսցես . զի աննըւէր Արամազդայ են խորհուրդք .  
« Այն ինչ իշխողն ամենայն՝ լիցի դըմնեայ ապառում » :

### Կորով

Իցէ . զի վեհերիս ՚ի զուր յոզպ գեգերեալ .  
Զի է՝ զի զաստուածն զոստին ըզդից ոչ ատեաս .  
Որ ըզբոյդ շըքոյ պատիւ վըտարանդի ետ մարդկան :

**Հեղինատոս**

« Ապաքէն աղքակցութիւն և ընդելքարք հըզօրք են » :

Կորով

Զեմզայս յուրաստ. այլ իցէ մարթ ըստունդանել հօր բանից .  
Ո՛չ մանաւանդ առաւել զահի հարեալ երկիցես :

**Հեղինատոս**

Դու գոգ միշտ անողորմես , և 'ի յոխորտ ժըմերտեալ :

Կորով

Ըստոփանք չիք և ոչ մի՝ աշխարել զայս սըրտառուչ .  
Մի լինիր աշխատ 'ի զուր տարապարտուց և ընդ վայր :

**Հեղինապոս**

Ո՛վ կարի այպնանախատ և ձաղելի ձեռագէտք :

Կորով

Է՛ր ատեասդ . զի վաստակոց , որպէս մեկին ասացից .  
Զոր այժմուս ունիս առ կոան՝ ճարտարութիւնք չեն պատճառք .

**Հեղինատոս**

Յանկամք թէ այլ ոք երբեք 'ի սոյն հասեալ էր վիճակ :

Կորով

« Ամենայն՝ բաց յիշխելցյ՝ շընորհեցաւ աստուածոց .  
« Զի աղատ և ոչ իսկ ոք՝ բայց լրկ ինքնին Արամազդ » :

**Հեղինատոս**

Գիտացի . այլ չունիմ ինչ սոցին լինել բանընդդէմ :

Կորով

Ո՛չ այլ և դու ըզկապանս զնովիմք ածել փութայցես .  
Զի մի յոյլ և կաղս 'ի կաղս տեսանիցէ ըզքեզ չայր :

**Հեփեստոս**

Համապատական արդ, ընդ ձեռակապս ահա հայեաց զառաջնեաւ:

**Կորով**

Բուռն հարեալ ձեռքքն ՚ի գա հարըստաբուռն զօրութեամբ  
Կըռանօք կոփեսջիր և ցըցեսցես ըզվիմօք:

**Հեփեստոս**

Արդարեւ կատարեսցի գործս ՚ի գըլուխ, ոչ ՚ի զուր:

**Կորով**

Կոփեա միշտ և պընդեսջիր, թողացուսցես երբեք մի.  
Զի գործ է յանհընարից ելի աղագս հայթայթել.

**Հեփեստոս**

Ահա այս ծըղիք նորին պատշաճեցան սերտ անքակ:

**Կորով**

Աւասիկ այժմէն իսկ յամուր հանգոյցըս պընդեաց,  
Զի տասցի, քան զլրամազդ զի է պոռոտ շամբշագոյն:

**Հեփեստոս**

Քան ըզսա այլ ոք բնաւ մի ըստգիւտ լիցի յիրաւի:

**Կորով**

Զապառում ծընօտս նորին հաստահեղյս բեւեռոք  
Թափ ընդ կուրծս անցուցեալ սեւեռեսջիր քաջապինդ.

**Հեփեստոս**

Այ, այ, Պոռմիթեւս, ընդ քո երկունադ հեծեծեմ:

**Կորով**

Դեռ և դու յուլանայցնս. և ողբս եղեալ կոծիցնս  
Զթընամին Արամազդայ. գուցէ և զքէն ասցես ողբս:

Հեղինատու

Տեսանես ըզչարաշուք տեսիլըս զայս աչզք քովք :

Կորով

Տեսի քաջ զլստ արժանեաց առեալ սորա փոխարէնս .  
Հանգա , ծն . զկողիւք դորա զանուրսդ անցն հաստաբեստ :

Հեղինատու

Զայս հորկաւ առնել ինձ կայ . և մի ինչ այլ տար հրաման :

Կորով

Տայլ տաց իսկ պատուէր , և մանաւանդ գոչեցից .  
Էջ՝ի վայր այդը՝ի խոնարհ , պլնդեա զազդերս բըռնաբար :

Հեղինատու

Ու ջանիւ մեծաճիդն վըճարեցաւ ել՝ի զլուխ :

Կորով

Ալդ կովիեա ուժդին կռանաւ ըզժակոտկէն ոտնակապս .  
Զի դըմնեայ և խիստ դահիճ հըրամանացս է քըննիչ :

Հեղինատու

Կըռնչէ և լեզու քո կերպարանացդ հանգունակ :

Կորով

Դու քեղէն հաւանեաց . զյաւակնութիւնս իմ ժըպիրհ  
Եւ զցասմանըս զայրուցս մի ինձ յերեսս հարկաներ :

Հեղինատու

Երթիցուք , զի շըզթայս կայ իրան նորա պարաւանդ :

Կորով

Այլ աղէ ժըպիհեսջիր յանդըդնութեամբդ . և զցից ձիրս  
Կողոպտեալ , մահկանացուաց տուր բաժին . զի քեզ իւ  
Մահացուք իցեն մարմուչ շնորհել անդորր յայս երկոցդ .  
Սլուայօթ յոր ջորջանզք քեզ Պումիթեւս կարդան դիք ,  
Այլ գու ինքն Պումիթեաւ կարօտանաս , զի միայն  
Ի բախտէս , զիամրդ . և է , իցէ քեզ մարթ անկանել :

Պոռմիթեցւ

Ով արփի զըրուանեան, երագաթև և շընչմունք,  
Եւ գետոց աղբերակոնք, և ծովասաստ կոհակաց  
Անթուելի վէտ վէտ ծիծառք, ամենամայր իսկ դու հող.  
Զըրժանակս արեգական զամենատես կարդամ ես.  
Տեսէք, որպիսի վիշտս կըրեմ աստուածս ես 'ի դից:

Հայեցարնուք, զի որբանի հիբութեամբ  
Ըզբիւրամեայ ամըս և ժամս արւայտեալ  
Տառապիցիմ, և գեռ նորոգ իշխեցողն  
Երանելեաց՝ ըղխիստ կապանս նիւթեաց ինձ.  
Ա՛հ, ահ, զոր կայն և զոր գալոցս առ յապայ՝  
Աշխարեմ վիշտս. զի երբ իցէ տեսանել  
Ջտառապանացըս զայսոցիկ կատարած :

Սակայն ես զի՞նչ բարբառիմ. դիտեմ վաղուց զամենայն  
Ճըշգըրտիւ զհանդերձեալն. և յիս ինչ ոչ յեղակարծ  
Արկածք ինչ ժամանեսցեն, զի հրամանաց և բախտից  
Մըտադիւր պարտ է անսալ. ածեալ քաջիկ ըզմըտաւ,  
« Թէ Հարկին զօրութիւն աննըկուն է և անյաղթ »:  
Այլ օսկայն անմարթ է ինձ կամ ոչ լրուել կամ լրուել  
Զիմ տագնապս. զի մարդկեղէն սեռի պարզես ինչ հնարեալ,  
Եղկելիս կամ ընդ հարկօքս այսու իսպառ վարակեալ.  
Շորթեալ իմ եղեգնալից՝ զհըրոյն կայծակն յաղբերէն,  
Զվարդապետ ճարտարութեանցըն բընաւից, և զմեծ գիւտ ; ,  
Զայսոսիկ ահա վըրէժս լուծանեմ ես ընդ վնասուց,  
Զի կապանըս վարակեալ բեւեռուապինդ կամ բացի : Կը մը  
Ա՛մ. զինչ ձայն, զինչ հոտ անլոյս աստուածաշարժ յիս ապդեաց  
Իամ 'ի դից, կամ 'ի մարդոց կամ յերկոցունց միախառն :  
Հասցէ ոք արդեօք 'ի ժայռս յետին՝ վըրտացս 'ի տեսիլ .  
Տեսէք զիս վատախտարակ զաստուածս սարեօք ամբապինդ.

Լզթընամին Արամազդայ, և զդից բոլոր՝  
Որ 'ի գաւիթս գեգերին միշտ Արամազդայ,  
Առ մեծ սէր մըտերմութեանն առ մարդիկ :  
Ո՛ ո. զի՞նչ այս խօշիւն ազդի յիս,  
Ի թեթև բախսել թեոց՝ շուընէ օդ,  
Եւ որ զինն կայ ամենայն՝ ահաւորք :

Թարգմ. Հ. Ա. Սուտրեաւ